ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2023թ. **N --- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԱԾ «ՈՐՍ» ՔԱՆԴԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» հ. 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի փետրվարի 14-ի N 243-Ա/2 հրամանով ստեղծված հանձնաժողովի առաջարկը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն հայ մեծանուն նկարիչ-քանդակագործ, Հայաստանի Հանրապետության ժողովրդական նկարիչ Հակոբ Հակոբյանի հեղինակած «Որս» քանդակը Երևան քաղաքի Թումանյանի անվան այգում տեղադրելու համար՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2023 թվականի սեպտեմբերի 12-ի
N --- Ա որոշման



ՔԱՆԴԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ 4/1

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԱԾ «ՈՐՍ» ՔԱՆԴԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության ժողովրդական նկարիչ, քանդակագործ, հայ մեծանուն մտավորական, Երևանի պատվավոր քաղաքացի Հակոբ Հակոբյանի ծննդյան 100-ամյակը նշելու նպատակով ստեղծվել է հոբելյանական հանձնաժողով, որտեղ ներկայացվածություն ունի նաև քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչությունը: Հանձնաժողովի նիստի ընթացքում (14.03.23) առաջարկվեց նկարիչ-քանդակագործի «Որս» քանդակի տեղադրման համար հնարավոր վայրերի դիտարկումը, որից հետո Հակոբ Հակոբյանի դստեր՝ Նորա Հակոբյանի կողմից Երևանի քաղաքապետարանին ներկայացվեց 6 հնարավոր տարբերակ: Ներկայացված տարբերակներից քանդակին առավել ներդաշնակում է Թումանյանի անվան այգու համապատասխան հատվածը (տեղանքի հստակ հատվածի տարբերակը կցված է): Տարածքի հատկացման խնդրանքով Երևանի քաղաքապետի պաշտոնակատար, քաղաքապետի առաջին տեղակալ Լևոն Հովհաննիսյանին հասցեագրված խնդրանք ներկայացվել է նաև ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հունիսի 2-ի N 01/12.1/13839-2023 թվակիր գրությամբ:

Քանդակի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերը չեն իրականացվելու Երևանի քաղաքապետարանի կողմից:

Հակոբ Հակոբյանը ծնվել է 1923թ. մայիսի 24-ին Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում: Կրթություն է ստացել Կիպրոսի Մելգոնյան վարժարանում, որից հետո ուսանել է Կահիրեի գեղարվեստի և Փարիզի Գրան Շոմիե ակադեմիաներում: Տարիներ անց՝ 1962 թվականին ընտանիքի հետ հայրենադարձվել է Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն:

Հեղինակի վրձնին են պատկանում «Վիշտ», «Սխտորներ», «Սումգայիթ» հայտնի կտավները: Ավելին՝ հայ մեծանուն մտավորականը նաև հեղինակել է մի շարք արժեքավոր քանդակներ, օրինակ՝ «Ընտանիք» անունը կրող ստեղծագործությունը:

Հակոբ Հակոբյանը մահացել է 2013թ. մարտի 9-ին Երևանում:

Կարևորելով մեծանուն հայ արվեստագետի արժանվույնս գնահատման, ստեղծագործական ժառանգության արժևորման և հանրահռչակման, նրա հիշատակը հավերժացնելու անհրաժեշտությունը՝ առաջարկվում է ընդունել սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԱԾ «ՈՐՍ» ՔԱՆԴԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հակոբ Հակոբյանի հեղինակած «Որս» քանդակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԱԾ «ՈՐՍ» ՔԱՆԴԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հակոբ Հակոբյանի հեղինակած «Որս» քանդակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ